ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՎԻՇԱՊ-ԿՈԹՈՂՆԵՐԸ

Դեռևս XX դարի սկզբներին Ն. Մառը և Յա. Սմիրնովը Գեղամա լեռներում հայտնաբերեցին ձկան և ցուլի պատկերներով վիշապ-քարակոթողներ։ Այդ կոթողների ուսումնասիրության հիման վրա նրանք եզրակացրին, որ դրանք մ. թ. ա. վաղ երկաթի դարաշրջանի կոթողներ են, կապված Հայկական լեռնաշխարհում ջրի պաշտամունքի հետ[1]։

Այնուհետև Մ. Աբեղյանը, հանգամանալից ուսումնասիրելով Գեղամա լեռների հիշյալ վիշապները, այն կարծիքը հայտնեց, որ Գեղամա լեռների և Հայաստանի այլ վայրերի ձկնակերպ կոթողները վերաբերում են Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններին[2]։

Այդ կոթողները կանգնեցնելու ժամանակաշրջանի մասին Մ. Աբեղյանը հանգեց այն հետևության, որ դրանք ժամանակով կապված են Դվինի, Արտաշատի և Արարատյան դաշտի ուրիշ կողմերում ոռոգման ջրանցքներ շինելու և օգտագործելու ժամանակի հետ, «հավանորեն ուրարտական և հայկական դարերում»[3]։

Այնուհետև Արագածի լանջերում, Գեղամա լեռներում, Սևանա լճի ավազանում և այլուր նորանոր վիշապներ հայտնաբերվեցին։ Հենց վերջերս Արագածի լանջերից Թալինի շրջանի Ն. Սասնաշեն գյուղի դպրոցի շենքը բերվեց ձկան պատկերով նոր կոթող։



Նկ. 1. Աղավնաձորի Աստվածածին եկեղեցին

Այնուհետև Մ. Աբեղյանը, հանգամանալից ուսումնասիրելով Գեղամա լեռների հիշյալ վիշապները, այն կարծիքը հայտնեց, որ Գեղամա լեռների և Հայաստանի այլ վայրերի ձկնակերպ կոթողները վերաբերում են Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններին[2]։

Այդ կոթողները կանգնեցնելու ժամանակաշրջանի մասին Մ. Աբեղյանը հանգեց այն հետևության, որ դրանք ժամանակով կապված են Դվինի, Արտաշատի և Արարատյան դաշտի ուրիշ կողմերում ոռոգման ջրանցքներ շինելու և

1960-ական թթ. սկզբին մեր ուշադրությունը գրավեցին երկու վիշապ-կոթողներ Եղեգնաձորի շրջանի Աղավնաձոր գյուղի սահմաններում, որոնք խաչքարերի վերածելու հետևանքով անկատ էին մնացել։ Եղեգնաձորի շրջանի Աղավնաձոր գյուղից մոտ 5 կմ դեպի հյուսիս-արևմուտք՝ «Վանքի դուռ» կամ «Ներքին Ուլգյուր» կոչվող վայրում գտնվում են Աստվածածին կոչվող միջնադարյան եկեղեցու ավերակները (նկ. 1)։ Ահա այստեղ, հիշյալ եկեղեցու հարավային կողմում, կողք-կողքի դրված են կարծր բազալտից ցուլի գլխով կերպավորված երկու վիշապ-կոթողներ։ Ոշագրավն այն է, որ XI—XII դդ. երկու վիշապներն էլ քանդակազարդվելով վերածվել են հայկական խաչքարերի՝ համապատասխան հիշատակություններով։

---

[1] Н. Я. Марр и Я. И. Смирнов. Вишапы, «Труды ГАИМК», 1931.

[2] Մ. Աբեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, 1941, էջ 85։

[3] Նույն տեղում, էջ 93։

Վիմագրագետ Ս. Բարխուդարյանը այդ կոթողների մասին կասկածանքով գրել է. «Այդ խաչքարը հին կոթողի տեսք ունի, յուրահատուկ է առանձնապես ճակատին շինված գնդաձև մասը, որի վրա խաչ է քանդակված»[4]։

Հայաստանում քրիստոնեության տարածման սկզբում ինչպես հեթանոսական տաճարներն են մասամբ վերածվել քրիստոնեական եկեղեցիների, այնպես էլ հեթանոսական կոթողները, մասնակի մշակման ենթարկվելով, դարձել են նոր կրոնի կոթողային հուշարձաններ ու դրանց վրա փորագրվել են խաչեր։ Այդ եղանակով քրիստոնեացվել են Շամիրամի, Սառնաղբյուրի մենհիրները, Գեղամա լեռների վիշապները, անգամ ուրարտական և մի քանի այլ կոթողներ։ Խաչքարերի են վերածվել նաև Աղավնաձորի վերը հիշատակված երկու վիշապ-կոթողները։

Կոթողներից առաջինի (մեծի) բարձրությունը 3,16 մ է (մնացածը խրված է գետնի մեջ, թե որքան, հայտնի չէ), լայնությունը 1,12 մ, հաստությունը՝ 0,46 մ։ Կոթողն ստորին մասում գնալով նեղանում է (նկ. 2)։ Աղավնաձորի վիշապ-քարակոթողն աչքի է ընկնում ցուլի գլխի ծավալային մշակումով, որը ցարդ մեզ հասած օրինակներից ամենատպավորիչն է։ Կոթողի վերևում, ցուլի գլխի երկու կողմերից ցած են իջնում ոլորաձև մոտիվներ, որպիսիք հաճախ

Նկ. 2

Նկ. 3

նմանեցվում են ցուլի կախ ընկած առաջին ոտքերի, երբեմն էլ՝ ջրի ալիքների[5]։

Կոթողը խաչքարի վերածելու հետևանքով, հարկավ, տուժել են ցուլի ոտքերի քանդակները և այլ մանրամասներ։ Ցուլի գլխի ծավալային քանդակի մեջ կարգավորվել է հավասարաթև ուռուցիկ մի խաչ, որն առնված է շղթայաձև պսակի մեջ (դա թելադրված է եղել տեղի պայմաններով), իսկ նրա երկարավուն գնչի վրա փորագրված է մեկ այլ փոքրիկ, անհավասարաթև խաչաքանդակ։ Երկու խաչերն էլ փորագրված են կոթողի վերևի երկու անկյուններում, որոնցից դուրս են գալիս մեկական խաղողի ողկույզներ՝ մշակված հատիկներով

---

4 «Դիվան հայ վիմագրության», պրակ 3-րդ, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 34։

5 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 86։

Այնուհետև կոթողի ամբողջ երեսով մեկ փորագրվել է մեծ, անհամասարաթև խաչաքանդակ, դարին յուրահատուկ զարդամոտիվներով և վրան գրվել է՝ Սուրբ Աստուածածին[6]։ Ներանից ներքև քանդակված է աստիճանաձև պատվանդան, որի երկու կողմերից վեր են ձգվում մեկական բուսական մոտիվ տարբեր դրվագներով։ Խաչի վերևի թևի երկու կողմերից դուրս են գալիս մեկական խաղողի ողկույզ տերևներով հանդերձ։ Խաչաքանդակի սուր վերջավորվող զույգ թևերի մեջ փորագրված են փոքրիկ խաչեր, իսկ պատվանդանի մակերեսը բաժանված է քառակուսիների։ Չորս թևանի երկու վարդյակներ էլ փորագրված են խաչի հորիզոնական երկու թևերի տակ։ Կոթողի հյուսիսային և հարավային կողին կարդում ենք.

Հա[յոց] թուականս։ ՆԾԸ։ (=1009)
Սարգիս երէց կանգնեցի զսուրբ նշանս։

Այսպիսով, արձանագրությունից երևում է, որ «վիշապ-կոթողը խաչքարի են վերածել 1009 թ. սուրբ Աստվածածին անունով։

Փոքր վիշապի քանդակները գրեթե նույնությամբ կրկնում են մեծ վիշապ-խաչքարի քանդակները, այն հիմնական տարբերությամբ, որ փոքր կոթողի ստորին մասում փորագրված է XII դարի խաչքարերին հատուկ խաչաքանդակ իր բոլոր մանրամասներով։ Փոքր կոթողի բարձրությունը 2,41 մ է, լայնությունը՝ 0,92 մ, հաստությունը՝ 0,37 մ։ Այն վերևում և ստորին մասում քիչ նեղանում է (նկ. 3)։ Կոթողի հարավային կողին փորագրված է երկտողանի արձանագրություն, որն այնուհետև շարունակվում է նրա թիկունքին։ Այստեղ փորագրված է 14 տողից կազմված արձանագրություն։

Ս. Բարխուդարյանը կոթողի թիկունքի արձանագրությունը չի վերծանել. նա գրում է, որ արձանագրության տառերը մաշվել են և ապա ավելացնում, որ «վերծանել չենք վստահում»[8]։

Մենք փորձել ենք վերծանել այս կոթողի արձանագրությունը, որի շնորհիվ կարծում ենք, որ պարզվում են նրա կանգնեցման, տեղանվան, պատվիրատուի և քանդակագործի անվան հետ կապված մի շարք հարցեր։

Ստորև ներկայացնում ենք արձանագրությունը և նրա վերծանությունը

ԻՎՈՒԽԸԻՍ ԿԱՆԿԵՑԱԻ—	Թվ[ԻՍ]ՈՒԽԸ (=1199) կանկեցաւ
ՈՒՐԱԽ ՆՇԱՆԱՁԵՌԱՄԲՄԱՐԳ—	Ուրախ նշանս ձեռամբ Մարգ-
ԱՐԻ	արի—
ՍԻԱՐՀԻ	սի ար հի
ԱՐՈՒՐՔ	արուրք (?)
ԳՈՅԻՇԱՏ	գո[յ]յիշատ-
ԱԿԾՆՈՂԱ	ակ ծնողա-
ՅԻՄՈՅՍՄՊ	ց իմոց Սմպ-
ԱՏԻՇԽԱՆ	ատ իշխան-
ԻՍԷԹԱԻՋ	իս է Թաւջ-
ՈՐԿՈՐՈՅ	որկորոյ
ՏՆՍ ԲԵՐԱՔ	տ[ա]նս բերաք
ՅԱՅՏՆՈՒ-	յայտնու-
ԹԵԱՆՍ ԱԾ	թեանս Ա.Ծ
ՈՂՈՐՄԵՑ	ողորմեաց-
Ե	է[9]։

Աղավնաձորի երկրորդ կոթողի արձանագրությունից պարզվում է, որ այն խաչքարի է վերակերտել վարպետ Մարգարը 1199 թ. իր ծնողների և Սմբատ իշխանի հիշատակին ու փոխադրել «Թոջորկորոյ, տանս», որը հավանաբար ներքին Ուլգյուրի կամ հին տեղանունն է և կամ էլ տոհմանուն։ Կարելի է ենթադրել նաև, որ հիշյալ վիշապ-քարակոթողը Թոջորկոր վայ-

6 «Դիվան», պրակ III, էջ 35։

7 Նույն տեղում, էջ 34։

8 Նույն տեղում, էջ 35։

9 Վերցնում ենք մեր հավաքածուից։ ԹՎ ՈՒԽԸ-ից հետո պարզորոշ երևում է Ս տառը։ Այս տառի վրա հազիվ նշմարվում է Ր տառը, որը կարող էր «իս» կարդացվել և վերաբերել «թվիս» բառին։ Հավանական է, որ «իս» հնչյունախումբը վերաբերում է թվ իս ՈՒԽԸ կապակցությանը։

րից փոխադրել են կոթողի այժմյան գտնվելու տեղը[10]։

Հավանաբար Կարմրաշենի (Ազիզբեկովի շրջան) հին ջրաղացի մոտ պահպանված 990 թ. հայտնի խաչքարը ևս նախկինում վիշապ-կոթող է եղել։ Այդ հետևությանը մեզ հանգեցնում են ոչ միայն քարի մշակման եղանակը, չափերը (3,66 մ), այլև խաչքարի թիկունքին պահպանված նրա հետևյալ արձանագրությունը.

«Ես Գրգորիկ որդի Գիորգ[այ], Ածային տեսչութեամբ գտի զարձանս, բաղում աշխատութեամբ եւ մեծ յ[ո]ւսաւս բերի[ի] դո[ւ]ռն եկեղեցոյս, կանգնեցի նշան սուրբ Խաչիս...»[11]։

Ընդ որում, ի տարբերություն վերը բերված Աղավնաձորի վիշապ-խաչքարերի՝ կոթողի մակերեսը ոչ միայն քանդակազարդվել է խաչի ավանդական պատկերով ու վարդյակով, այլև քանդակազարդվելով ողջ մակերեսը փոս է ընկել, որի հետևանքով էլ նրա վրայի հին քանդակների հետքեր չեն պահպանվել։

Աղավնաձորի վերոհիշյալ «վիշապների» հայտնաբերումը վկայում է, որ ջրի պաշտամունքի հետ կապված այդ կոթողները լայն տարածում են ունեցել Հայաստանում և ընդգրկել են Արագածի լանջերը, Գեղամա լեռները, Սևանի ավազանը, Շիրակը, Կոտայքը, պատմական Հայաստանի Փոքր Հայքը, Սյունիքը, Ծորոխի ավազանը, Ջավախքը և այլն, որոնց ավելանում է նաև Վայոց ձորը։

Մինչև այժմ Հայաստանում հայտնաբերված վիշապները երկու տեսքով են հանդես եկել՝ ձկան և ցուլի պատկերներով, սակայն Գեղամա լեռների վիշապներից մեկի վրա ձկան և ցուլի կերպարները պատկերվել են միաժամանակ՝ նույն կոթողի վրա։

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհում մինչև վերջերս հայտնի վիշապները և Եղեգնաձորի շրջանում հայտնաբերված երկու քարակոթողները հետաքրքիր են նրանով, որ տարբերվում են ոչ միայն կերպավորման, այլև քանդակման եղանակով (ցուլի գլխի ծավալային քանդակազարդումը)։ XI—XII դդ. այս կոթողները վերածվել են խաչքարերի և իբրև միջնադարյան Հայաստանին բնորոշ կոթողային հուշարձաններ՝ հարդարվել են խաչքարերին հատուկ զարդաքանդակներով։ Հեթանոսական շրջանի կոթողային հուշարձանները քրիստոնեականի վերածելու ընթացքը շարունակվել է XI—XII և հետագա դարերում։

Այս կոթողները հետաքրքիր են նաև XI—XII դդ. վիմագիր հիշատակարաններով, որոնց շնորհիվ ի հայտ են գալիս խաչքարը կերտող մի նոր քանդակագործ՝ ի դեմս Մարգարի և «Թոռորկորոյ տուն» տեղանունը կամ տոհմանունը։

Ա. ՇԱՀԻՆՅԱՆ

10 Բացառված չէ, որ Աղավնաձորի հիշյալ երկու վիշապներն էլ եղած լինեն այժմյան տեղում, Աստվածածին տաճարի մոտ, մանավանդ որ տաճարն ավելի ուշ, հավանաբար XIII դարում է կառուցվել, իսկ վիշապը խաչքար է դարձել 1009 թ.։ Միաժամանակ հնարավոր ենք համարում ենթադրել նաև, որ այդ կոթողները կարող էին այստեղ բերվել նաև մոտակա վայրերից։ Այդ հետևությանը մեզ մղում են փոքր վիշապ-խաչքարի արձանագրության հետևյալ տողերը. «կանկեցաւ ուրախ նշանս... Թաւջորկորոյ տանս բերաք», որով և ենթադրվում է, որ խաչքարի վեմը, այսինքն վիշապաքարերն այստեղ են բերվել այլ վայրերից։

11 «Դիվան», պրակ III, էջ 41—42, նկ. 29 և 29ա։

КАРТИНА В. СУРЕНЯНЦА В ЭРМИТАЖЕ

Вардгес Яковлевич Суренянц (1860—1921) — крупнейший представитель армянского искусства конца XIX—начала XX в. Это был необычайно одаренный человек — он занимался живописью, иллюстрировал книги, оформлял спектакли, создавал проекты архитектурных сооружений, писал статьи по вопросам архитектуры и искусства, делал литературные переводы. Художественное образование В. Суренянц получил в Московском училище живописи, ваяния и зодчества (1876—1879) и в Мюнхенской академии художеств (1885).

Диапазон творчества В. Суренянца-художника широк — им создано много портретов современников, пейзажей, исторических и историко-бытовых полотен. Лучшие его произведения отмечены высоким мастерством и проникнуты глубокой любовью к своему народу, многострадальной родине.